Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԽՆԿՈ-ԱՊԵՐ
(ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ)

# ԱՅԾ ՏԱՆԸ ՅԵՎ ԲՈՍՏԱՆԸ



ՊԵՏՀՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ

Պոզմավոր այծ,
խըշտ-խշտիկ,
մազավոր այծ,
հուշտ-հուշտիկ,
մըկը՛կ, մըկը՛կ,
մըկ-Մաստան,
Ծուր ես յեկել
դու բոստան.
ի՞նչ ես եդտեղ
բզբզում.
սիրտդ կարտո՞փ է
ուզում։

Չե՞, հողը մենք
Բահեցինք,
չե՞, հողը մենք
տափնեցինք,
հողում կարտոփ
ցանեցինք.
չե՞, բուկը մենք
տվեցինք,
ցնցուղ-ցնցուղ
Ջրեցինք.
վորտե՞ղ եյիր
դու, անբան,
դու տափերը
նափչփան—
մըկը՛կ, մըկը՛կ
մկմկան,
յերկար միրուք
տմբտմբան։





Պոզավոր այծ,
խորշոտ-խշտիկ,
մազավոր այծ,
հուշտ-հուշտիկ,
ի՞նչ ես եղտեղ
թղբգում.
տակ ուտե՞լ ես
դու ուզում։
Չէ՛, տակը մենք
քաղնել ենք,
չէ՛, տակը մենք
ջրել ենք,
չէ՛, տակը դեռ
նազուկ է,

չէ՛ թուփը նուրբ
բազուկ է.
չմոտենաս
դու մարգին,
վո՜չ բազուկին,
վո՜չ տակին։
Դո՞ւ յես ցանել,
այ անբան,
դու տափերը
չափչփան—
մրկր՛կ-մրկր՛կ
մկմկան,
յերկար միրուք
տմբտմբան։



A II 38779



Պոզավոր այծ
խըշտ-խշտիկ,
մազավոր այծ,
հուշտ-հուշտիկ,
ի՞նչ ես եդտեղ
քրքրում.
սիսեռ ուտե՞լ ես
ուզում.
Հավաք-հավաք,
խմբովի,
քանդեցրինք
քաղ ու թի.
սիսեռն հողում
կանաչեց,
բոյին տվեց
ու աճեց։

Ցողունները
շիպ-շիտակ,
ծաղիկները
սիպ-սիպտակ,
փոճոկները
մի-մի մատ,
հատիկները
անուշ կաթ։
Դո՞ւ յես ցանել,
այ անբան,
դու տափերը
չափչփան—
մըկը՛կ, մըկը՛կ,
մըկըկան,
յերկար մորուք
ամբոմբան։







Գոզավոր այծ
խըշտ խըշտիկ,
մազավոր այծ
հուշտ-հուշտիկ,
ի՞նչ ես եդտեղ
բզբզում.
սիրտդ գազար է
ուզում։

Մենք իրար հետ
մրցեցինք,
բահով հողը
շրջեցինք,
արևի տակ
խարկեցինք,
մաղը դրինք
մաղեցինք,
քարից, կոշտից
զտեցինք.
ընտրած սերմը
թրջեցինք
և շաղ տվինք
շաղեցինք,
հողում բուռ-բուռ
ցանեցինք։



Բուսավ, հասավ.
ի՞նչ գազար.
կարմիր-կարմիր —
յալազար։
Բա գազարի
թուփ-տերեվ.
փռվել է փունջ
փետրաձև։
Մարգն ուզում ես
փորփրե՞լ,
թուփ ու գազար
տրորե՞լ։
Դո՞ւ յես ցանել,
այ անբան,
դու տափերը
չափչփան—
մըկը՜կ մըկը՜կ
մկմկան,
յերկար միրուք
ամբտամբան։



Գոգավոր այծ
խըշտ-խշտիկ,
մազավոր այծ
հուշտ-հուշտիկ,
ի՞նչ ես եդտեղ
բզբզում.
տոմատ ուտե՞լ ես
ուզում։
Վոր տոմատը
թարմ մնա,
չը ճլորի, փչանա,
մենք տոմատի
սերմացուն
խնամեցինք
ջերմոցում։
Շիթիլ արինք,
հանեցինք,
շարան-շարան
շարեցինք,
հատ-հատ հողում
տնկեցինք,
ձողիկներից
կապեցինք։



Վո՞րտեղ էյիր
դու., անբան,
դու տափերը
չափչփան—
մըկը՛կ մըկը՛կ
մկմկան,
յերկար միրուք
ամբտամբան։





Պոզավոր այծ,
խըշտ-խշտիկ,
մազավոր այծ,
հուշտ-հուշտիկ,
ին՞չ ես եդտեղ
բզբզում.
կաղամբ ուտե՞լ ես
ուզում։
Կաղամբի սերմ
ցանեցինք,
չիթիլ-չիթիլ
տնկեցինք,
հատ-հատ, հատ-հատ
Ջրեցինք,
կրակ արինք
ծուխ ու ինք,
թրթուռներին
ջարդ տվինք։
Մուն, մլակից
մաքրեցինք,
գլուխ-գլուխ
բուսցրինք
ու ես չափին
հասցրինք։
Աշխատեցինք
որ, որի—
թողնենք այծը
տրորի՞։
Ին՞չու սարում
չարածի,
բուրդ մրուքը
մտն ածի
և չսպասի
ձմռանը.
յերբ կփակվի
նա տանը՝
կաղամբ, գազար,
բազուկ, տակ
իր բաժինը
հետ կտանք։
Փշենք այծին,
դեհ, տղերք,
մերն ե ջանքը,
մերն ե բերք։



H 11/38719
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220038719

[054]

A II 3871

Ճիպոտ, մտրակ
խաղցրին,
ավլին այծին
փախցրին։

Գո՜ւկ, են մընկէկ
Մաստանը,
մին էլ կգմա
բոստանը։



Б 43

КОЗА В ОГОРОДЕ
ПЕР. ХННО-АПЕР

ГИЗ. ССРА. 1930 ЭРИВАНЬ

Պատվեր № 1424 Գրառավայր № 5890 (բ) Տիրաժ՝ Վիճագրատուն